

ՀԱՅԵՐՈՒ ՈՒ ՔԻՒՐԳԵՐՈՒ ԲՆԱԿԱԿՑՈՒԹԻՒՆԸ.

(Զինուորական ու քաղաքական կազմակերպուելիւնը մեկ հողի վրայ. Քիւրդերու նսակեցուցիւնն ու քաղաքականութիւնը. Հայերու կազմը իբր ազգ, Քիւրդերուն իբր ցեղ. Պէնիսուսնի բեւեռագիր արձանագրութիւնը Քիւրդիսանի մասին:)

Հին պատմութիւնները ընդհանրապէս հիմնուած են քաղաքական հողային տիրապետութեան, պատերազմներու, փոխ առ փոխ յաղթութեան ու պարտութեան, հարկատու ու հարկառու դրութիւններու, ու զինուորական աւազակային կազմակերպութիւններու վրայ:

Այս ընդհանուր տարածական ուղղութեանց մէջ, հինգերորդ դարուն հին Հայերու ու հին Քիւրդերու յարաբերութիւնները կը պարզեն ուրիշ նոր երևոյթ մ'ալ, — երկու տարբեր ցեղերու միացած մեկ քաղաքական կազմութիւնը, որոնք միանգամայն որոշակի կը պահեն իրենց առանձին ինքնութիւնը, Հայերու բնակակցութեամբ Քիւրդիստանի մէջ:

Այս տեսութիւնները կը հաննէք Պէնիսուսնի բեւեռագիր արձանագրութիւններէն, որոյ մասին քաղուածները առաջ կը բերենք նոր ուղղութեամբ լոյս տեսած պատմութենէ մը (\*):

«Պարսից Դարեհ (Darius) թագաւորի ժամանակ (521-486) երբ նա Բաբելոնը նուաճելով կը զբաղէր. Հայերը ու Մէաիացիները կ'ապստամբէին: Հայ Սատրապ Dadarshish կը յարձակէր ապստամբներու վրայ՝ զիւզի մը կամ զիւղաքաղաքի մը մօտիկ՝ որ ըստ Պէնիսուսնի բեւեռագիր արձանագրութեան կը կոչուէր Վահանա անուանուած Զուգա, սահմանէն ոչ հեռու՝ Թուրալանարա ճիւղ. (19 Ապրիլ 521). արձանագրութիւնը ենթադրել կու տայ որ Զուգայի հանդիպումն յաջող անցաւ Հայերու համար:

(\*) Histoire des Anciens Arméniens par Noël Dolens et A. Khatch. p. 172.